

ԲՈՅԱՐԻ ԲԵՂՄԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

ՍԱՄՈՒԵԼ ԲԱԼԱԶԵՍՆԻ

Աճեցէք և բազմացարուք և դաշխարհ լցէք...

Բոլոր կենդանի էակները՝ թէ բոյսերը և թէ կենդանիները՝ ունին մի քանի նշանաւոր յատկանիշներ, որոնցով սաստիկ տարբերում են մեռած անօրգանական բնութիւնից։ Այդ յատկանիշների թուին պատկանում է անկասկած նաև բազմանալու ընդունակութիւնը։ Մեռած առարկաները ընդունակ չեն բազմանալու, մինչդեռ ոչ մի բոյս կամ կենդանի չէք գտնիլ, որ զուրկ լինէր այդ ընդունակութիւնից։

Կենդանիների աշխարհում բազմանալու ցանկութիւնը կամ բնագրումը այնքան զօրեղ է, որ կարող է համեմատուել միմիայն ինքնազոյութեան բնագրումի հետ։ Ի՞նչպիսի զոհաքերութիւններ չեն անում կենդանիները, որպէս զի ասլահովեն իրանց սերունդների կեանքը։ Յաճախ նոյն իսկ անհատական կեանքը չէ խնայում այդ վսեմ նպատակի համար։

Բազմանալը կենդանիների շրջանում հետևանք է լինում ըստ մեծի մասին բեղմնաւորութեան։ կենդանիների ամեն մի տեսակը ունի որձեր և էգեր։ Վերջինների բեղմնաւորւելուց առաջանում են նոր սերունդները։ Աակայն հարկաւոր է աւելացնել, որ բազմանալու այդ միջոցը – բեղմնաւորւելը – գոյութիւն ունի աւելի բարձր կազմածք ունեցող կենդանիների շրջանում։ իսկ ինչ վերաբերում է ստոր կենդանիներին, նրանցից շատերը սեռ չունին, այսինքն որ և է սեռի օրգաններ նրանք չունեն, ուստի և անհնարին է բեղմնաւորութիւնը նրանց միջև։

Եթէ սեռ չկայ ստոր արարածների շրջանում, ապա ի՞նչպէս
են բազմանում նրանք:

«Անսեռ կերպով» — ասում են գիտնականները: Երբ մի որ
և է ստոր կենդանի զարգանում է այնպէս որ այլ ևս մեծանալ չի
կարող, նրա մարմինը ուղղակի կէս և լինում, բաժանում է երկու
մասերի, որոնցից ամեն մէկը նոր անհաս է: Այդ անհատներից
ամեն մէկը մեծանում է և նորից բաժանում... Անսեռ կերպով
բազմանում են օրինակ բռւստերը, սպունդները, ինֆուզորիանները և
ուրիշները:

Սյոպիսով կենդանական աշխարհում գոյութիւն ունին բազմա-
նալու երկու ձե՛ բեղմնաւորութիւնը և անսեռ կերպով բազ-
մանալը:

Բազմանալու նոյն երկու նշանաւոր ձեւերը մենք գտնում ենք
նաև բոցսերի շրջանում: Ստոր կազմւածք ունեցող բոյսերը բազմա-
նում են անսեռը կերպով, իսկ աւելի բարդ և բարձր կազմւածք
ունեցողները — բեղմնաւորութեամբ: Զրիմունների (водоросли) մի
քանի տեսակները, բակումբիանները, սունկերը — դոքա բոլորն էլ բազ-
մանում են անսեռը կերպով, այսինքն նրանց մարմինը կամ բաժան-
ում է ստոր կենդանիների նման, կամ թէ արտադրում է այսպէս
անտանեալ սպորներ: Յաճախ այդ բոցսերի որոշ մասերում դոչա-
նում են անթիւ միկրոսկոպական մարմնիկներ, որոնք միասին փո-
շու տպաւորութիւն են անում: Դոքա են սպորները, որոնցից ամեն
մէկը խոնաւ տեղ ընկնելով՝ զարգանում, է և նոր բոյս է դառնում:
Սպորները ուրեմն նոյն նշանակութիւնն ունին, ինչ որ սերմերը
բարձր կազմւածք ունեցող բոյսերի համար:

Սակայն անցնենք բոյսերի բեղմնաւորութեան երևոյթներին,
որոնց մէջ շատ հետաքրքրական և զարմանալի բաներ կը գտնենք:
Նախ կանգ առնենք բոյսերի բեղմնաւորութիւն՝ խօսքերի
վերայ: Ի՞նչ է նշանակում այդ: Միթէ բոյսերի մէջ էլ կան արա-
կան և իգական անհատներ կենդանիների որձերի և էղերի նման:

Հին ժամանակներում և նոյն իսկ միջին դարերում այդ հարցին
բացասական պատասխան էին տալիս: Այն ժամանակները նոյն իսկ
ծիծաղելի էր թւում — սեռի գոյութիւն ենթադրել բոյսերի շրջանում:

Սակայն սկսած XVII դարից, երբ զիտնականները սկսեցին մի

փոքր աւելի ուշադրութիւն դարձնել գիտողութիւններ անելու վերաց, իրողութիւնը փոքր առ փոքր սկսեց պարզել:

Հարցը պարզելուն ամենից առաջ օգնեց Տիւբենդենի համալսարանի պրոֆեսոր Կամերարիուսը, որը փորձերով ապացուցեց, որ բոյսերի շրջանում էլ գոյութիւն ունի բեղմաւորութիւնը: Յայտնեց, որ իբրև բեղմաւորութեան գործիք ծառայում են բոյսերի ծաղիկները:

Ուրեմն անթիւ քննուց և շքեղ ծաղիկները, որոնցով լիքն է բնութիւնը, առեղծւած են միայն նրա համար, որ օգնեն բոյսերի բազմանալուն և առաջացնեն վերջինների անթիւ սերունդներ:

Մաղլի կազմութեան հետ ծանօթանալու համար մոտքերենք շուշանը: Ամենքը տեսած կը լինեն այդ բոսքը և զիտեն, որ նրա ծաղիկը ունի վեց հատ սիրուն սպիտակ թերթիկներ, որոնք օղածե կամած են ծաղկի հիմքից: Դոքա միասին կազմում են ծաղկի պսակը: Վերջինի միջից երկում են վեց հատ երկար թելի նման օրդաններ գեղին գլուխներով. դրանց անւանում են առէչքներ: Վերջապէս ծաղկի կենդրոնից առէչքներով շրջապատւած բարձրանում է նոյնպէս մի թելի նման օրգան, որ շատ հեշտ ջոկում է առէչքներից. դա՝ ինչպէս ասում են՝ վարսանդն է:

Սովորե նկատեցի, որ առէչքները ունին գեղին գլուխներ: Եթէ վերցնենք մի առէչք և դիտենք նրա գլուխը, մենք իսկոյն կը նկատենք, որ դա իսկապէս մի քասկի պէս բան է գեղին փոշիով լցւած: Այդ հանգամանքն է, որ առիթ է տւել ուսումնականներին անւանել առէչքների գեղին գլուխը փոշանօթ:

Այս երեսը նետաքրքրով հետաքրքրողը եթէ դիտէր բոյսերի ծաղիկները, իսկոյն կը համոզւէր, որ վարսանդը ծաղկի ամենակարեւոր մասերից մէկն է, որովհետեւ նրա ներքին մասումն է, որ դոյանում են սերմեր. եթէ ծաղկից պոկենք վարսանդը, ծաղկիը այլ ևս անկարող կը լինի սերմեր արտադրելու:

Սակայն զիտողութիւնները ցոյց տւին, որ ոչ պակաս գեր են կատարում սերմեր արտադրելում նաև առէչքները. բանից դուրս եկաւ, որ վարսանդի ներքին մասում սերմեր երբէք չեն գոյանում առէչքների մասնակցութեան: Տեսնենք ինչումն է կայտնում առէչքների մասնակցութիւնը:

Մաղկի բացւելուց մի որոշ ժամանակամիջոց անցած՝ ծաղկի մէջ գտնվող օրդանները համսում են լիակատար զարգացման, նրանք բոլորովին հասունանում են սերմեր արտադրելու համար։ Այդ ժամանակ առէքների ծայրերում գտնվող փոշանօթները պատռում են ու դուրս թափում ղեղին փոշին։ Երբ այդ փոշուց մի չնչին քանակութիւն ընկնում է վարսանդի զլիխին՝ (որը՝ 'ի դէպ է ասել՝ անւանում է սպի), չի անցնում երկար ժամանակ և վարսանդի ներքին մասում սկսում են սերմեր գոյսնալ։

Պարզ է, որ այսուղ առէքները այրական օրդանների գեր են կատարում, իսկ վարսանդը իդականի թողի կարծի ընթերզողը թէ ասածս ենթադրութիւն է, ոչ, դա թողի կարծի ընթերզողը թէ ասածս ենթադրութիւն է՝ ասպացուցւած բազմաթիւ փորձերով և դիտողութիւններով։ Ընթերզողն էլ եթէ կամենայ, կարող է առուզել ասածս թիւններով։ Ընթերզողն էլ եթէ կամենայ, կարող է առուզել ասածս թիւններով։ Թողնաս մօտենայ մի որ և է բոյսի ծաներս հեռանեալ կերպով։ Թողնաս մօտենայ մի որ և է բոյսի ծաղիկներին; զգուշութեամբ կտրի հեռացնի նրանից բոլոր առէքները ու ծածկի այդ ծաղիկները խասով, որպէս զի միջատները մօտենան նրանց։ Եթէ այս բոլորը կատարւի զգուշութեամբ, այն ժամանակ խասի (կիսէց) տակ դանւող ծաղիկներից և ոչ մէկն էլ արտադրիլ ոչ մի սերմ, թէև լինեն նրանց մէջ իդական օրգանները—վարսանդները։

Փոխենք այժմ մի փոքր մեր փորձը։ Մօտենանք մի որ և է բոյսին և տասը հատ ծաղիկները ընտրելով, հեռացնենք վերջիններից բոլոր առէքները, թողնելով նրանց մէջ վարսանդները, ինչպէս արել էինք առաջ։

Ցետոյ, վերցնելով դանակով նոյն ծառի միւս ծաղիկներից մի փոքր առէքների փոշի, թափենք այդ մեր ընտրած ծաղիկներից հինգի վարսանդների վերայ, իսկ մնացած հինգ ծաղիկների վարսանդները ազատ պահենք փոշուց։ Ուրեմն մենք այժմ ունենք տասը ծաղիկ առանց առէքների։ այդ տասից հինգ ծաղիկների վարսանդների վերայ փոշի է ածւած, իսկ միւս հինգ վարսանդները զուրկ են փոշուց։ Ծածկենք այժմ՝ ինչպէս և առաջ էինք արել՝ բոլոր տասը ծաղիկները խասով։

Մի քանի ժամանակ այդպէս թողնելուց յետոյ մենք կը տեսնեք, որ տասը ծաղիկներից հինգի մէջ սերմեր են դոյցել, իսկ

միւս հինգ ծաղիկները մնացել են անպտուզ: Եթէ լաւ նայենք կը տեսնենք, որ սերմեր արտադրողները այն ծաղիկներն են եղել, որոնց վարսանդների վերայ մենք ածել էինք առէջքների փոշի, իսկ անսփոռող մնացել են նոքա, որոնց վարսանդները լենք զբկել էինք փոշուց:

Բուսական աշխարհում մենք լսու մեծի մասին գտնում ենք սեռերը միացած, միևնոյն ծաղկում լսու մեծի մասին լինում են և առէջքներ և վարսանդներ: Այդ դէպքում միևնոյն բոյսը ներկայանում է թէ արական և թէ իգական անհատներ: Այդ երկոյթը, այսինքն սեռերի միացումը, դոյցութիւն ունի նաև կենդանիների շրջանում: կան կենդանիներ, որոնց ամեն մի անհատը միաժամանակ թէ էգ է և թէ որձ: Իբրև օրինակ կարելի է բերել սոսոր կազմը՝ ւածք ունեցող որդներին. դրանց ամեն մի անհատը պարունակում է իւր մարմնի մէջ թէ արական և թէ իգական օրգանները. այդ պատճառով էլ նա ընդունակ է լինում ինքն իրան բեղմնաւորել:

Հարկաւոր է նկատել, որ սեռերի միացումը միևնոյն անհատի մէջ (Կերմովքրողիախմ), թէև ինչպէս ասացի պատահում է կենդանիների շրջանում, բայց ոչ այնքան յաճախ. սեռերի միացումը կենդանիների շրջանում աւելի բացառութիւն կը համարուի, քան օրէնք:

Ուրիշ բան է բուսական աշխարհը. այսոեղ սեռերի միացումը ոչ թէ բացառութիւն է, այլ օրէնք. ինձորենին, տանձենին, սերգելիլը, վարդենին, մանուշակը և շատ ուրիշ բոյսեր հեր մովք ու դիտներ են, այսինքն ամեն մի բոյսը միաժամանակ պարունակում է իւր մէջ երկու սեռերն էլ:

Սակայն պէտք է աւելացնել, որ, բացի հերմովքրողիա բոյսերից, կան և այնպիսիները, որոնց արական ու իգական անհատները միացած չեն, այլ դոյցութիւն ունին առանձին առանձին: Իբրև ապացոյց կարող ենք առաջ բերել ամենքին յայտնի ուռենին: Եթէ ընթերցողը ուշադրութեամբ դիտի մի շարք ուռենու ծառեր, նա անշուշտ կը նկատի, որ նրանց ծաղիկները երկու տեսակ են. կան ուռենիներ, որոնց վերայ գտնւում են միմիայն առէջք աւոր ծաղիկներ. դոքա ունենալով առէջքներ (արական օրգան) միշտ զուրկ են լինում վարսանդներից և կոչւում են արական ծա-

Ղիկներ։ Բացի դրանցից կան և ուռենու ախսպիսի անհատներ, որոնք բոլոր ծաղիկները լինում են իգական, այսինքն նրանց մէջ լինում են միմիայն վարսանդներ, իսկ առէջքներ չեն լինում։

Այդպիսով գոյութիւն ունին ուռենու առանձին արական ծառ և առանձին իգական ծառ։

Խքն ըստ ինքեան հասկանալի է, որ ուռենու արական ծառի վերաց երբէք չեն կարող սերմեր գոյանալ, որովհետեւ նրանց վրաց չկան վարսանդներ։ Միւս կողմից իգական ուռենին էլ միայն այն ժամանակ է կարողանում սերմեր ու պտուղներ պատրաստել, երբ նրա մօտ բուսնում է արական կամ առէջքաւոր ուռենին։ Թէ ինչպէս է անցնում առէջքների փոշին արական ուռենուց իգական վարսանդների վերաց, այդ մենք կը տեսնենք մի փոքր յետոյ։

Անցեալ դարում, երբ գիտնականների մեծամասնութիւնը դեռ չէր հաւատում թէ բոյսերն էլ սեռ ունին, մեծ տպաւորութիւն արաւ գերմանացի գիտնական Գլեդիչի ձեռնարկած հետեւեալ փորձը։ Բերլինի բուսաբանական այգում, որի դերեկոտրն էր Գլեդիչը, կար մի արմաւենի, որը միշտ վարսանդաւոր ծաղիկներ էր տալիս, ուրեմն իգական անհատ էր։ Բայց որովհետեւ Բերլինում չկար ոչ մի արական արմաւենի, ուստի բուսաբանական այգում գտնւող արմաւենին չէր կարողանում սերմեր արտադրել, թէև ապրում էր 80 տարի։ Վերջապէս Գլեդիչը իմացաւ, որ Լայզերիգում կայ նոյն տեսակ արմաւենու արական անհատ։ Նա իսկոյն կարգադրեց, որ Բերլին բերեն Լայզերիգի արմաւենու մի ճիւղը ծաղիկների հետ Լայզերիգի արմաւենու ճիւղը ստանալուն պէս, Գլեդիչը վերցրեց մի փոքր փոշի և թափեց Բերլինի այգում գտնւող արմաւենու ծաղիկների վարսանդների վերաց։ Կարճ ժամանակից յետոյ Բերլինի արմաւենին սերմեր տևեց։

Բացի ուռենուց և արմաւենուց, կան և ուրիշ բոյսեր, որոնց արական և իգական անհատները առանձին առանձին գոյութիւն ունին։ Դրանց թւին են պատկանում նաև կաղամախին (ՏՈՊՈԼ) և կանեփը (ԵԿՈՆՈԱ)։

Խօսելով կանեփի մասին պրոֆեսոր Բորոդինը աւելացնում է՝ Շիգական անհատների հետ, որոնք սերմեր են տալիս, բուսնում են առանձին արական անհատներ, որոնք բացառապէս առէջքաւոր

ծաղիկներ են արտադրում... թէ արական և թէ իգական անհատ-ները զարգանում են բոլորովին միատեսակ սերմերից, այնպէս որ միանգամայն անհնարին է զուշակել թէ որ սեռի կը լինի զարգացող բոյսը, մինչև նրա վերաց չեն առաջանալ այս կամ այն (այսինքն արական կամ իգական) ծաղիկները։ Այն հարցը թէ բրբ և ի՞նչ պատճառներ են արտադրում բոյսերի այս կամ այն սեռը, նոյնքան քիչ է պարզւած, որքան և կենդանիների վերաբերմամբ։ Արդեօք սերմի մէջ արդէն գծւած է սեռը, թէ նա առաջանում է յետոյ որ և է արտաքին պայմանների ազդեցութեան տակը,—այդ մենք չգիտենք։

«Սակայն վերին աստիճան հետաքրքրական է այն ֆակտը, որ՝ նորագոյն դիտողութիւնների համեմատ՝ արական և իգական անհատների թւական յարաբերութիւնը մնում է միևնոյնը, թէև արտաքին պայմանները սաստիկ տարրեր լինէին։ Օրինակ Mercurialis appusa բոյսի վերաբերմամբ գտննած է, որ 100 հատ իգական անհատների վրաց դալիս են 106 հատ արական անհատներ...»¹⁾ Ըստ հակառակը 100 հատ իգական կանեփին դալիս են միմիայն 86 արական անհատներ...»²⁾։

II

Ըսթերցողին անշուշտ անցայտ չէ այն հանգամանքը, որ յաճախ բեղմնաւորութիւնը տեղի է ունենում զանազան տեսակներին պատկանող կենդանիների միջև։ Օրինակ բեղմնաւորութիւնը պատճում է ճագարների և նապաստակների միջև, շների և գայլերի միջև, ձիաների և էշերի միջև և այլն։ Զանազան տեսակների մէջ կատարւած բեղմնաւորութիւնից առաջացած սերունդները չեն լինում կատարեալ նման իրանց մայրերին կամ հայրերին, այլ եթէ կարելի է այսպէս ասել՝ միջին տեսակի կենդանիներ են լինում, նմանւելով մի քանի բաներում հայրերին, միւս կողմերով մայրերին։

¹⁾ Ուրեմն մնձ նմանութիւն կատ մարդկանց և ալդ բոյսերի բազմանալու մէջ. մարդկալին հասարակութեան մէջ 100 աղանդերին դալիս են 106 աղջկելներ... (Դա անպայման օրէնք չէ, Ծանօթ. Խմբ.)։

²⁾ Проф. Бородинъ—Пропесеъ оплодотворенія въ растит. царствѣ. էջ 5—6.

ինչպէս օրինակ ջորին, որը ոչ կատարեալ ձի է, ոչ էշ, այլ միջին տեսակի կենդանի: Այդպիսի միջին տեսակ կենդանիները անւանւում են հիբրիդ (ասերէն ասում են կամ բարուճ կամ պոմեն):

Եթէ բոյսերի շրջանում կան սեռեր, չի՞ կարելի արդեօք նրանցից էլ հիբրիդներ արտադրել: Փորձերը իրաւունք են տալիս դրական պատասխան տալ այդ հարցին: Այժմ արդէն ապացուցւած է որ բոյսերը, կենդանիների նման, լնդունակ են հիբրիդներ տալու: Հարկաւոր է միայն ինկատի ունենալ, որ հիբրիդներ ստանալու համար անհրաժեշտ է վերցնել թէև զանազան, բայց և այնպէս կազմւածքով իրարից մօտիկ բոյսեր:

Վերին ասուիճանի հեշտութեամբ հիբրիդներ են տալիս զանազան տեսակ լինձորենիները, տանձենիները, սեխերը և այնու չիբրիդ ստանալու համար հետեւալ կերպ են վարւում: Ենթադրենք, որ մենք ունենք լինձորենու երկու իրարից բոլորովին տարբեր տեսաներ և նրանցից ցանկանում ենք հիբրիդ ստանալ: Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է մի տեսակի լինձորենու մի քանի ծաղիկներից կտրել հեռացնել բոլոր առէշքները, որպէս զի նրանցից փոշի չթափեի վարսանդների վերայ: յետոյ լինձորենու միւս տեսակի ծաղիկներից պէտք է դանակով առէշքներից մի քիչ փոշի վերցնել և թափել առաջին տեսակի լինձորենու վարսանդների վերայ: Այդպէս արւեստական կերպով բեղմնաւորւելուց յետոյ, բեղմնաւորւած ծաղիկները ծածկում են խառով, որպէս զի միջատները չմօտենան նրանց: Մի քանի ժամանակից յետոյ արւեստական կերպով բեղմնաւորւած ծաղիկները սերմեր կը տան: Այդ վերջինները եթէ սերմենք, կը սուսաննք նրանցից ոչ առաջի և ոչ երկրորդ տեսակի լինձորենիներ, այլ հիբրիդներ կամ միջին տեսակի լինձորենիներ: Օրինակ եթէ առաջին տեսակ լինձորենու պտուղները շատ մեծ են, իսկ երկրորդինը շատ մանր, նրանցից սուացած հիբրիդը կ'ունենայ միջին մեծութեան պտուղներ:

Այս գործողութիւնը այժմ ահագին գործադրութիւն ունի թէ անասնապահութեան և թէ այգեպանութեան մէջ. անասնապահները և այգեպանները սաստիկ կատարելագործել են՝ առաջինները իրանց կենդանիներին, երկրորդները—իրանց բոյսերը՝ միացնելով արւեստական կերպով զանազան տեսակի անհասներին և հիբրիդներ ստանալով նրանցից:

Վերջին ժամանակները մանաւանդ մեծ ուշակրութիւն են դարձնում և շատ զբաղում են խաղողի վազերից հիբրիդներ առանձլով, որսվհետեւ վազերի հիբրիդները մեծ գործնական նշանակութիւն ունին փիլոքսերա հիւանդութեամ դէմ կռւելում Յայսնի է, որ ամերիկական վազերը աճնքան էլ չեն վնասում փիլոքսերայից, բայց տարաբաղդաբար նրանց տւած խաղողը անպիտան է: Միւս կօղմից խաղողի եւրոպական վազերը թէեւ լաւ սպառուղ են տալիս, բայց չեն կարողանում դիմանալ փիլոքսերայի աւերտումներին: Այդ դիմանականները աշխատում են արեւստական կերպով այնպիսի հիբրիդներ ստանալ ամերիկական և եւրոպական վազերից, որոնք ունենան երկու տեսակների լաւ կողմերը և զուրկ լինեին նրանց պակասութիւններից, այսինքն՝ լինեին դիմացկուն փիլոքսերայի դէմ և լաւ պառուզներ տային:

Այժմ անցյնենք մի ուրիշ նշանաւոր հարցին, այն է թէ ի՞նչ միջոցներով է փոխւում առէչքների փոշին վարսանդների վերայ: Դիտողութիւնները ցոյց են աալիս, որ յաճախ մի որ և է ծառի վարսանդները բեղմնաւորելու համար առէչքների փոշին բերւում է բաւական հեռու տեղերից: Աւշակրութեամբ ուսումնասիրելով բոյսերի կեանքը գիտնականները ցոտան, որ փոշին տեղափոխում է մի տեղից միւս տեղ բեղմնաւորութեան համար երկու միջոցներով. ա) քամու և բ) միջամների ծգնութեամբ:

Քամին հետևեալ կերպով է օգնում բեղմնաւորութեանը. Երբ որ և է ծառի ծաղիկները զարգանում են և նրանց առէչքները հասունանում են, առէչքների փոշանօթները պատուում են: Այդ ժամանակ, եթէ քամի է բարձրանում, նա քշում տանում է փոշին մի ծառից դէպի միւս ծառերը և թափում վերջինների վարսանդների վերայ: Դրանից յետոց բեղմնաւորութիւնը կատարւած է: Փոշին տեղափոխում է քամու օգնութեամբ. օրինակ ասդատեր և ծառերի (ԽՈՊԻԱ), հացանատիկների և այլն Հասկանալի բան է, որ այն բոյսերը, որոնց փոշին քամու օգնութեամբ է տեղափոխուում, պէտք է ահազին քանակութեամբ առէչքների փոշի պատրաստեն, որպէս զի այդ փոշուց գոնէ մի փոքրիկ մասը կարողանալ ընկնել մօտակայ ծառերի վարսանդների վերայ: Դրանով է բացառուում, որ ասղատերն բոյսերը աճնքան առէչքների փոշի են արտադրում:

որ քամի եղած ժամանակ նրանցից բարձրանում է դեղին փոշու ամբողջ ամպ:

Հստ մեծի մասին շատ հեշտ է լինում չոկել այն բոլոսերը, որոնց փոշին փոխում է քամու միջոցով. մինչդեռ վերջին բոյսերը ունենում են մանր աննկատելի տգեղ ծաղիկներ, առաջնները ընդհակառակը զարդարւած են լինում շքեղ, սիրուն ծաղիկներով: Եթէ դուք տեսնեք մի որ և իցէ բոյս գեղեցիկ աչքի լնինող ծաղիկներով, համոզւած եղէք, որ այդ բոյսի փոշին մի անհատից տեղափոխում է միւս անհատների վարսանդներին միջատների օգնութեամբ. վարդենու, շուշանի, մանուշակի, նարգիզի և շատ բւրիշների փոշին միջատների շնորհիւ է անցնում մէկից միւս անհատներին:

Անկասկած մեծ նշանակութիւն ունի այն հանդամանքը, որ միջատների օգնութեամբ բեղմնաւորւող բոյսերը լինում են աւելի դեղեցիկ գոյներով նկարած: Եթէ այդ բոյսերը չունենալին մեծ, սիրուն, աչքի լնինող ծաղիկներ, այն ժամանակ միջատները նրանց չէին տեսնիլ հեռացի և չէին գալ նատիլ նրանց ծաղիկների վերայ:

Ահա թէ ինչ է ասում Զ. Դարւինը իր յայտնի «Ցեսակների ծագումը» դրւածքում:

Առ ազգություն բոյսի մի քանի անհատները արտադրում են միայն արական ծաղիկները չորս առեշբներով... իսկ միւսները արտադրում են միմիայն իգական ծաղիկներ... Տեսնելով այդ բոյսի մի արական և մի իգական ծառերը, որոնք իրարից 60 ևարդ հեռու են գտնուում, ես սկսեցի զիտել խոշորացոցի ասկ իգական ծառի 20 ծաղիկների վարսանդները և նրանց բոլորի վերաց գտաց փոշու հատիկներ... որովհետեւ մի քանի օրւայ լնթացքում քամին փշում էր իգական անհատից դէպի արականը, ուստի նա չէր կարող տանել փոշին (արականից իգականին)... Յոլոր իմ տեսած ծաղիկները բեղմնաւորւած էին մեղուների օգնութեամբ, որոնք պատահմամբ բերել էին փոշին արական ծառից»...

Սակայն տեսնենք թէ ինչպէս են միջատները փոխում առեշբների փոշին մի ծաղկից դէպի միւսները: Բանը նրանումն է, որ ծաղիկների մէջերքում յանախ գոյանում ու հաւաքւում է մի տեսակ

քաղցր հեղուկ, որին դիանականները նեկտար անուն են տեղի՝ Ահա այդ նեկտարի համար է որ միջանները հեսուտեղերից՝ տեսնելով աչքի ընկնող ծաղիկներ՝ թռչում դալիս են, որպէս զի ծծեն համեղ նեկտարը։ Երբ նրանք իրանց գունչը կոխում են ծաղկի մէջը նեկտար ծծելու համար, նրանց մէջքը դիպչում է առեջքների փոշանօթներին և ծածկում փոշիով։ Նեկտարը ծծելուց յետոյ միջառը թռչում է գէպի միւս ծաղիկը, էլլի կոխում է գունչը նեկտարը ծծելու համար ծաղկի մէջ, իսկ այդ ժամանակ այդ երկրորդ ծաղիում դառնւող վարանդը բոլորովին մէքէնայաբար քսում է միջառի մէջքին ու ծածկում փոշիով։

Այդպէս փոխւելով մի ծաղկից միւսին միջառները անդադար տանում են իրանց հետ ծաղիկների փոշին ու թափում միւս ծաղիկների վարսանդների վերաց։ Խնձն ըստ ինքեան հասկանալի է, որ միջառները օգնում են բոյսերի բեղմնաւորութեան բոլորովին անդիտակցաբար։ Նրանց նպատակն է միմիացն ծծել, բայց այդ նպատակին հասնելու համար նրանք անդիտակցաբար մեծ օգուտներ են ապիս բոյսերին հեշտացնելով նրանց բեղմնաւորութիւնը։

Ոչ միայն ծաղիկների դոյնը այլ և նրանց սպակի մեծութիւնը և ձեւը կապ ունին միջառների այցելութեան հետ։ այն ծաղիկները, որոնց շատ յաճախում են կարճ կնճիթով միջառներ, ունենում են աւելի կարճ պատկներ, որպէս զի այդ միջառների կնճիթը կարողանայ հասնել սպակի յատակում դառնւող նեկտարին։ Ընդհակառակը՝ աւելի բարձր սպակա են ունենում այն ծաղիկները, որոնք բեղմնաւորում են երկար կնճիթ ունեցող միջառների օգնութեամբ։

Այդպիտով՝ բեյսերի բազմանալու տեսակէտից ծաղկի ամենակարենը մասերը առէջքներն ու վարսանդներն են, իսկ պատկը, նրա գոյնը, ձեւը, նեկտարը—դրանք բոլորը ունին երկրորդական նշանակութիւն, երկրորդական ֆունկցիա—այն է դրանել միջառներին և ապահովել վարսանդների բեղմնաւորութիւնը։ Դրանով է բացատրում այն հանգամանքը որ բեղմնաւորութիւնը կատարւելուց յետոյ ծաղկի սպակը թառամում է ու վեր ընկնում, որովհետեւ բեղմնաւորութիւնը կատարւելուց յետոյ նա այլ ևս հարկաւոր չէ։

Այս վարդապետութիւնն է, որ կոչում է «Ծաղկի թէօրիա» և որը ընդունում է այժմ գիտութեան մէջ։ Այդ թէօրիայի գլխաւոր հեղինակները Նպրենդէլն ու Դարւինը են։

Նաա կարելի է, որ ընթերցողը գարմացած լինի և հարցնի, թէ ինչ կարիք կայ փոշին մի բոլոր միւսներին փոխւելու, եթք բոլուսերը ըստ մեծի մասին հերմոֆրոպիտ են. չէ որ ամեն մի ծաղկում շատ անդամ լինում են հայ առէշքները, համ էլ վարսանդը իրար կողքին կապած։ Ել ինչ կարիք կաց, որ քամին կամ՝ միջատները ուրիշ տեղերից փոշի քերեն մի որ և է ծաղկի վարսանդը բեղմնաւորելու համար, եթք նոյն հէնց այդ վարսանդի մօա կապած են առէշքները։ Անհամեմատ աւելի հեշտ չէր լինի, եթք ծաղիկները ինքն աբեղ մնաւորւէին, այսինքն որ նրանց վարսանդները բեղմնաւորւէր իրանց մօա գտնող ասեշքների փոշիով։

Նպրենդէլը առաջինը եղաւ, որ հիմնաւորապէս հետազոտեց այդ հարցը։ Նա գոտու, որ բոլուսերը՝ եթէ կարելի է ալսպէս ասել՝ խորշում են ինքնարեղմնաւորւելուց։ «Բնութիւնը՝ ինչպէս երեւում է չի ցանկանում», որ ծաղիկը բեղմնաւորւի իր սեփական փոշիով՝ ասում էր Նպրենդէլը։ Եթք այս բանը իմացաւ Դարւինը, նա ձեռնարկեց մի շարք փորձերի, որպէս զի իմանայ, թէ ինչ է նշանակում, որ բոլուսերը խորշում են բեղմնաւորւելու աւելի հեշտ միջոցով՝ սեփական փոշիով։ Դարւինի փորձերը հետևեալումն էին կայանում։ Մի քանի բոլուսերի ծաղիկները նա բեղմնաւորում էր նոյն ծաղիկներում գտնուղ առէշքների փոշիով, այսինքն նա ստիպում էր ացդ ծաղիկներին ինքնարեղմնաւորւել։ Դրանից անկախ նա վերցնում էր նոյն տեսակ բոլուսերի մի ուրիշ սերիա և դրանց ծաղիկները բեղմնաւորում էր ոչ սեփական այլ ուրիշ անհամաներից վերցրած փոշով։

Անելով այդպիսի փորձեր Դարւինը աեսաւ, որ ինքնաբեղմնաւորւած բոյսերը տալիս են աւելի քիչ և աւելի վատ սերմեր քան թէ նրանք, որոնք բեղմնաւորւել են ոչ սեփական փոշիով։ Կան նոյն իսկ բոլուսերը, որոնք բորբովին սերմեր չեն տալիս, եթք բեղմնաւորում են սեփական փոշի-

ով։ Ահա ուրեմն ինչ է պատճառը, որ բոյսերը խորշում են ինքնաբեղմնաւորւելուց։

Սակայն որովհետեւ բոյսերից շատ շատերը հերմոֆրոդիտներ են, ուստի և շատ հեշտ ու յաճախ կարող էր կատարւել ինքնաբեղմնաւորութիւնը, այդ պատճառով բնութիւնը դիմել է մի շարք միջոցների որպէս զի խանգարի բոյսերի ինքնաբեղմնաւորութեանը։

Մանօթանանք այդ միջոցների հետո

Աւաջին միջոցն կայանում է նրանում, որ միւնոյն ծաղկի մեջ գտնւող առէջքներ և վարսանդը միաժամանակ չեն հասունանում։ կան իրաւ բոյսեր՝ ինչպէս *Geranium pratense*, *Malva*, *pelargonium* և այլն, որոնց առէջքները աւելի վաղ են հասունանում քան վարսանդը։ Երբ մի որ և է ծաղկում առէջքները հասունանում են ու նրանց փոշանօթները պատռւելով դուրս են թափում փոշին, այդ ժամանակ նոյն ծաղկի վարսանդը վեռ լիովին զարգացած չըլինելով՝ անկարող է լինում օգտւել իր մօսը գտնող առէջքների փոշուց, իսկ երբ նա (վարսանդը) հասունանում է իր մօս գտնող առէջքների փոշանօթներում, էլ փոշի մնացած չի լինում, այնպէս որ վարսանդը ստիպված է լինում բեղմնաւորւել ուրիշ անհատների փոշիով, քամու կամ միջաների միջոցով բերւած։

Հակառակ երեսովին մենք տեսնում ենք *Plantago media*, *parietaria diffusa*, *Licula pilosa* բոյսերի շրջանում։ սրանց մօս էլ վարսանդն է աւելի շուտ հասունանում։ այնպէս որ երբ մի որ և է ծաղկի վարսանդը պատրաստ է լինում բեղմնաւորութեան համար, նոյն ծաղկի առէջքների փոշանօթները լինում են փակւած, ուստի և անկարելի է դառնում ինքնաբեղմնաւորութիւնը։

Երկրորդ միջոցը ինքնաբեղմնաւորութեան դէմ հետևեալն է։

Մի քանի բոյսեր, որոնց մեջին պատկանում է և *Primula*՝ տալիս են միշտ երկու աեսակ ծաղիկներ։ Զանազանութիւնը նրանցում կայանում է նրանում, որ ծաղիկների մի տեսակում վարսանդներն են շատ երկար, իսկ առէջքները — կարճ։ Այդ հանգամանքը խանգարում է մի որ և է ծաղկում գտնուղ վարսանդին բեղմնաւորել նոյն ծաղկում գտնուղ առէջքների փոշիով։

Բացի գրանից կան մի շարք բոյսեր, ինչպէս մանուշակ, *Aris-*

tolochia՞ն, Orchis և այլն, որոնց մէջ վերին աստիճան զարմանակի խոչնդռաներ են դրւած ինքնաբեղմնաւորութեանը խանգարելու համար։ Սակայն այդ խոչնդռաների վերաց ես կանգ չեմ առնիլ, որովհետեւ նա մեզ շատ հեռու կը տանէր։

Հասկանալի բան է, որ շատ անգամ մի որ և է տեսակ բոլսեր վարսանդների վերաց թափւում է և բոլորովին տարբեր տեսակ բոյսի փոշին։ Հէ որ մի որ և այգում ապրում են շատ բոլսեր, և երբ քամի է բարձրանում, նա փոշին մի բոյսից թափում է նրա մօտը գանւող բոյսի ծաղիկների վերաց առանց ուշադրութիւն դարձնելու թէ նրանք մէկ թէ զանազան տեսակների են պատկանում։ Դիտողութիւնները ցոյց են տալիս, որ երբ մի որ և է բոյսի ծաղիկների վերաց թափում է բոլորովին տարբեր տեսակ բոյսի փոշի, այդ վերջինը ոչինչ ներգործութիւն չի կարողանում անել վարանդի վերաց։ այս դէպքում բեղմնաւորութիւն չի կատարուում։

Իսկ երբ մի որ և է բոյսի վերաց թափում է թէև ջոկ, բայց էլի կազմածքով մօտիկ տեսակի փոշին, այն ժամանակ բեղմնաւորութիւնը կատարուում է և դրանից առաջանում են հիբրիդներ, որոնց հետ մենք արդէն ծանօթ ենք։

III

Ինչ որ մինչև այժմ պատմեցի, բոլորը վերաբերում է բարձր կազմածք ունեցող բոյսերին, այն է ծաղկաւոր բոյսերին։ Բայց յայտնի է, որ բեղմնաւորութիւնը կատարուում է նոյնպէս և ան ծաղիկ բոյսերի շրջանում։ Անծաղիկ բոյսերից միայն ամենասոր կազմածք ունեցողներն են զուրկ սեռերից այդ պատճառով բազմանում են անսեռը կերպով։

Հետաքրքիր է բեղմնաւորութիւնը ջրիմուռների շրջանում։ Ջրիմուռներին անկասկած տեսած կը լինի ընթերցողը, դոքա այն կանաչ թելի նման բոյսերն են, որոնք ապրում են գետերի մէջ գտնւող քարերին կպած։ Յաճախ միևնույն քարին կպած են լինում ջրիմուռների բազմաթիւ թելեր։ Ջրիմուռներից մի քանի տեսակներն էլ ապրում են ճահիճներում, կազմելով կանաչ կենդանի կեղե հոսած ջրի երեսին։ Այդ վերջինները կպած չեն լինում որ և է պինդ մարմնի, այլ ազատ լողում են ջրի վերաց։

Սկսենք *Oedogonium* կուտող ջրիմուռից: Դա ունի կանաչ թելի նման մարմին եթէ այդ վերջինին դիտենք խոշորացուցի տակ, մենք կը տեսնենք, որ *Oedogonium*՝ի թելը բաղկացած է առանձին օզակներից, որոնց ուսումնականները անւանում են «խորշեր» (ԷԼԵՏԵՔ): Միկրոսկոպը ցոյց է տալիս, որ ոչ միայն ջրիմուռները այլ և առհասարակ բոլոր բոցերի մարմինը բաղկացած է խորշերից: Խնչողէս մի որ և է տուն կազմւած է անթիւ մանր մասերից — ագուռներից, նոյնպէս և բոցսի մարմինը կազմւած է բաղմաթիւ մանր մասերից — խորշերից:

Այդպէս ուրեմն *Oedogonium*՝ի թելը բաղկացած է մի շարք իրարից կամած խորշերից: Սկզբում այդ վերջինները ունենում են միեւնոյն տեսքը, այնպէս որ թելը լինում է հաւասար հաստութեան ամեն մի մասում: Բայց շուտով բանը փոխում է. թելը կազմող խորշերից մի քանիսները սկսում են ուռչել, մեծանալ և գնդակաձև տեսքեր են ընդունում այդ գնդակաձև խորշերը, որոնք անւանում են իգական, և կատարում են յետազայ ժամանակները նոյն գերը, ինչ որ վարսանդները ծաղկաւոր բոյսերի շրջանում:

Իգական խորշերի կազմելու ժամանակ մի երեսով էլ է կատարում *Oedogonium*՝ի մէջ. թելը կազմող խորշերից մի քանիսները — ամենափոքրիկները ենթարկում են նոյնպէս մի ինչ որ փոփոխութեան, որից յետոյ նրանց թաղանթը պատռում է և նրանց միջից գուրս են գալիս մանր կոլոլ մարմնիկներ, որոնք ազատ կերպով լողում են ջրում: Այդ մարմնիկները *Oedogonium*՝ի արական տարրն են կազմում և յետազայ ժամանակներում կատարում են նոյն գերը, ինչ որ ծաղկաւոր բոյսերի առէջքների փոշին: Երբ *Oedogonium*՝ի արական մարմնիկները լողում են ջրի մէջ, նրանք բոլորովին կենդանիների տպաւորութիւն են անում: Մի փոքր լողալուց յետոյ այդ մարմնիկները սկսում են մօտենալ *Oedogonium*՝ի թելի իգական գնդակաձև և ուռած խորշերին, որոնք ծածկւած են լինում հաստ թաղանթով: Վերջինը փոքր ժամանակից յետոյ ծակւում է, կազմուում է փոքրիկ մուտք, որի միջով մտնում է արական մարմնիկը իգական խորշի մէջ ու ձուլում վերջինի հետ: Դրանով վերջանում է բեղմաւորութիւնը: Մի քանի ժամանակ անցած, բեղմաւորւած իգական խորշը զարգանում է և տալիս *Oedogonium*՝ի նոր անհատ:

Մի փոքր տարբեր կերպով է կատարւում բեղմնաւորութիւնը
Voucheria sessilis կոչւած ջրեմուռի մէջ։ Դա նոյնպէս երկար
 կանաչ թելի նման մարմին ունի։ Որոշ ժամանակ Վոշերիացի միե-
 նոյն թելի վերայ առաջանում են երկու փոքրիկ ուռոցքներ, որոնք
 շուտով աճելով բաւական երկարանում են։ Նրանցից մէկը սկսում
 է հաստանալ և շուտով գնդակի ձև է սունում—դա ապագայում՝
 ալէոք է իդական տարրի-վարսանդի դերը կատարի։ Միւսը մնում է
 ընդհակառակը բարակ, կարճ ժամանակից յետոյ նրա ծայրը սկսում
 է կռանալ դէպի գնդակաձև աւելւածքը։ Միենոյն ժամանակ նրա
 կռացած ծայրում գոյանում են բազմաթիւ մանր մարմնիկներ,
 որոնք պատռում են իրանց թաղանթը և շուապով ժողովւում գըն-
 դակաձև (իգական) աւելւածքի շուրջը։ Դրանից յետոյ նոյն մարմ-
 նիկներից մէկը կամ մի քանիսը մտնում են գնդակաձև աւելւածքի
 մէջ և ձուլում նրա հետ։

Բեղմնաւորութիւնը կատարւելուց յետոյ գնդակաձև աւելւածքը
 բաժանւում է Վոշերիացի թելից, առանձին կերպով զարգանում և
 և տալիս Վոշերիայի նոր անհատ։